

# Կարելու է Լեռնային Ղարաբաղի Ե՛ւ Կարգավիճակի, Ե՛ւ Սահմաններու Հարցը

Գրեց ՎԻՓՍԱԿԻ ԽԱՂԱԹՈՎ

Յօդուածի հեղինակը կը ներկայացնէ իր տեսակէտը, նպատակ ունենալով բանակցութիւններու անմիջական մասնակիցներու եւ քաղաքականներու ուշադրութիւնը հրաւիրել սահմաններու ճիշդ ընտրութեան խնդրի վրայ: Սահմաններու ճշդութիւնը Արցախի կարգավիճակի հարցի լուծման կարելու է լրացումն է եւ պէտք է իրագործուի ոչ թէ դրուագային մակարդակի, այլ լայնածաւալ ընդգրկումի հիման վրայ, նկատի առնելով տեղւոյն պատմական տեղագրական ու աշխարհագրական (ներառեալ տնտեսա - աշխարհագրական) առանձնայատկութիւնները:

★ ★ ★

Վերջերս այն յոյսը ծնաւ, որ կը սկսի նախկին հորիզոնային Միութեան տարածքէն ներս ամէնէն երկարատեւ բախումի խաղող կարգաւորման գործընթացը: Խօսքը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի մասին է, որ արդէն ծանօթ է որպէս ատրպէյնացի - դարաբաղեան դիմակայութիւն:

Ղարաբաղցիները արեւան գնով յաջողեցան ոչ միայն պահպանել նախկին Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի սահմանները, այլեւ բնակչութեան ինքնապաշտպանութիւնը ապահովելու նպատակով ազատագրել նախնիներու հողը, որոնք կորսուած էին ոչ հետու անցեալին: Հետեւեալը եղաւ այն, որ շտկուեցան Լեռնային Ղարաբաղի սահմանները, ինչ որ հայ բնակչութեան ապահովութեան եւ բանակցութիւններ սկսելու համար լուրջ նախադրեալ հանդիսացաւ:

Այստեղ շեշտը պիտի դնենք Ատրպէյնան - Ղարաբաղ հակամարտութեան շրջանէն ներս հայկական ձեւաւորուող սահմաններու եւ կարգավիճակի փոխադարձ կապակցութեան վրայ:

Այո, իրօք, կարգավիճակն ու սահմանները կարծես մետալի երկու կողմերն են: Եւ այս մէկը կարելի չէ մոռնալ: Առաւել էս, որ 1920 - 30ական թուականներուն մէկ անգամ արդէն հիմնահարցի տուեալ մանրամասնութիւնը փորձարկելուց ԼԳՄԻ ստեղծման ժամանակ: Համառօտ ձեւով յիշեցնենք այս մասին: ԼԳՄԻ սահմանները կը բնութագրուէին մեծ կտրտուածութեամբ եւ խոր սեպերու եւ ատրպէյնացական կղզեակներու գոյութեամբ, գոր նպատակաւոր կերպով կը վերածուէին ատրպէյնական իշխանութիւնները: Փաստօրէն այն ժամանակ առաջին կարգ մղելով Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, պաշտօնակներն ու թուրքիան օրակարգէն դուրս բերին սահմաններու հարցը, ինչ որ թոյլ տուաւ Ղարաբաղի մէջ հայկական ինքնավարութեան տալ «ժանեակային» սահմաններու ձեւ: Այդ ժամանակուրէն ի վեր, պաշտպանուելով հայերուն ինքնավարութիւն տալու վահանով, իշխանութիւնները լայն հասարակութեան ուշադրութիւնը շեղեցին ԼԳՄԻ սահմաններու ենթակայական վիճակէն, արհեստականութենէն եւ ոչ - կենսունակութենէն:

Այսօր կրնայ ստեղծուիլ նոյնման կացութիւն մը: Ատիկա կը հիմնուի թէկուզ այն իրողութեան վրայ, որ անդրադառնալով Ատրպէյնան - Ղարաբաղ հակամարտութեան կարգաւորման, կը խօսուի միայն Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան կարգավիճակի մասին: Իսկ սահմաններու խնդրէն ուշադրութիւնը աւելի էս շեղեցնելու համար աղմուկ կը բարձրացուի հայերու կողմէ «բուն Ատրպէյնանէն» «գաւթուած» տարածքներու շուրջ: Ճիշդ այս աղմուկի փոնիս վրայ Հ. Ալիեւ առաջնահերթ խնդիր կը համարէ ոչ այնքան ԼԳՀ ու Ատրպէյնանի միջեւ կրակի դադարեցման հարցը, որքան հայկական ուժերու հետագումը «գրաւուած» հողերէն: Հարց կը ծագի, թէ որքան է այդ հողերը: Առանց այս հարցի պարզաբանման, Ատրպէյնանը եւ անոր հովանաւորները կրնան խօսիլ եւ յետոյ նաեւ պնդել միայն ԼԳՄԻ սահմաններու մասին: Այս պարագային կը կարծենք, որ դարաբաղցի հայերը ոչ մէկ կարգավիճակով պիտի փրկուին, նոյնիսկ եթէ քաղաքական անկախութիւն ձեռք բերեն Ատրպէյնանէն:

Ահա թէ ինչու անհրաժեշտ է ի սկզբանէ յստակօրէն յիշել եւ պահանջել կենսունակ սահմաններու հաստատումը Լեռնային Ղարաբաղի համար եւ չառաջնորդուիլ համաշխարհային հանրութեան որոշումներու հանդէպ նակատագրապաշտութեամբ: Վերջինս բաւական յարմար չի խորանար տարածքի էրեւո - աշխարհագրական առանձնայատկութիւններու մէջ, հիմնուելով կամ միայն խեղաթիւրուած միակողմանի տեղեկութիւններու վրայ եւ կամ մեկնելով միայն սահմաններու հաստատման արեւմտեան չափանիշերէն: Կը բաւէ յիշել թէկուզ Պոստմիայի օրինակը, որու պարագային, ողջունելով արիւնահեղութեան վերջ տալու ՄԱԿի եւ ԵԱՀԽի ձգտումը, կարելի չէ չնշել անոնց տարածքի տարանջատման առաջարկած սխեմաներու անկատարութիւնը: Եւ միայն երբ սահմանները գծուեցան, կարելի եղաւ ժընեւի մէջ նստիլ բանակցութեանց սեղանի շուրջ: Նոյնպէս պէտք է վարուիլ նաեւ միւս թէժ կէտերու պարագային, յատկապէս Լեռնային Ղարաբաղի մէջ: Այստեղ Լեռնային Ղարաբաղի սահմաններու հաստատման ժամանակ անթոյրատրելի է արտաքին ճնշումը անմիջական մասնակիցներու վրայ, քանի որ ատու կարելի է տապալել խաղող գործընթացը եւ կամ անիկա երկար կեանք չ'ունենար:

Հիմա աւելի մանրամասնօրէն դիտենք Լեռնային Ղարաբաղի տարածքին պետական միատարրի յստակ սահմաններու հարցը (անկախ անոր քաղաքական կարգավիճակէն):

Առաջին՝ ատուցում պէտք է համապատասխանեն նախկին ԼԳՄԻ սահմաններուն: Երկրորդ՝ այդ սահմանները պէտք է կարելի եղածին չափ համապատասխանեցուին բնական սահմաններու հետ, որով որոշ չափով կը գորանայ բնակչութեան ապահովութիւնը: Երրորդ՝ ատուցում պէտք է ընդգրկեն աւելի

Ամենապատիւ եւ գերեզմանիկ Տէր Յովհաննէս Պետրոս ժԲ. Գաւապեան կաթողիկոս - պատրիարքի նախագահութեամբ՝ հայ կաթողիկէ եկեղեցւոյ եպիսկոպոսաց սիւննողոսք գումարուեցաւ պատրիարքական Աթոռի մօտ՝ ի Զմմառ, 12 - 20 հոկտեմբեր 1993ին:

Կիստերուն մասնակցեցան նուիրապետութեան 14 արհեստակարարներն ու եպիսկոպոսները (Պէրոյթի - Հայաստանի - Պոլսոյ - Հայկապի - Պաղտատի - Իրանի - Եգիպտոսի - Ֆրանսայի - Լատին Ամերիկայի - Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի - Գամշիլէի): Նմանապէս հրաւիրուած էին հովուական բաժնին մասնակցելու՝ Յունաստանի եւ Գամակոսի վիճակաւորները, Միջերկրական գոյգ միաբանութիւններու ընդհանուր սբբա - հայրերը, Զմմառեան միաբանութեան պատրիարքական փոխանորդը եւ Անարատ Յղութեան հայ հոյրերու միաբանութեան ընդհանուր մեծաւորուին:

ՍԻՒՆՆՈՐՈՍԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՆՈՒԹԵՐԷՆ ՅԻՇԵՆՔ:

- 1.- Պատրիարքական զանազան յանձնախումբերու աշխատանքները:
- 2.- Պատրիարքական համագումար:
- 3.- Հայրենիքի վերաբերեալ հովուական հարցեր:
- 4.- Հայ կաթողիկէ եկեղեցւոյ մասնակցութիւնը՝ Լիբանանի յատուկ սինոդին:
- 5.- Քահանայական կոչումներու կրթապատրաստութիւն:
- 6.- Եկեղեցական անձնակազմի բաշխում:
- 7.- Հայ կաթողիկէ մամուլի դերն ու հեռանկարները:
- 8.- Մասնաւոր կանոնագիրք՝ հայ կաթողիկէ եկեղեցւոյ:
- 9.- Պատրիարքական գերագոյն ատեանի ընտրութիւն:

Միւս կողմէն նիստերու աւարտին՝ հրատարակուեցան, ի մէջ այլոց, հետեւեալ տեղեկութիւններն ու որոշումները:

- 1.- Ներկայացուեցան եւ քննարկուեցան՝ ծիսական, քրիստոնէականի ուսուցման, միութեանական եւ քահանայական կոչումներու պատրիարքական յանձնախումբերու աշխատանքները եւ վաւերացուեցան ապագայի ծրագիրները:
- 2.- Որոշուեցաւ պատրիարքական համագումար մը կազմակերպել յառաջիկայ տարիներուն եւ առ այդ՝ յատուկ յանձնախումբ մը կազմուեցաւ, նախապատրաստողական աշխատանքները յառաջ տանելու համար:
- 3.- Ժողովական հայրերը տեղեկացան պատրիարքական պատուիրակութեան այցելութեան արդիւնքներուն՝ տրուած Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն հայոց կաթողիկոսին եւ Հայաստանի Հանրապետութեան վեմաշուք նախագահին, 1993ի յունիսի 7ին: Որոշեցին առանձին գրութեամբ մը՝ յարգալիք ողջոյնի եւ սիրոյ խօսք ուղղել հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ հայրապետներուն՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն հայոց կաթողիկոսին եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան վեմաշուք նախագահ՝ տիար Լեւոն Տէր Պետրոսեանին:

Ժողովականները իմացան որ սեպտեմբեր 18ի Երեւանի մէջ գումարուած նիստի ընթացքին, «Հայաստան» համահայ-

մեծ տարածութիւն, քան Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հոչակման պահուն: Զորքորդ՝ ատուցում պէտք է ապահովեն նոր յառաջացող վարչատարածային միաւորին գոյութեան կայունութիւնը, որու լուծման լաւագոյն ուղին Լեռնային Ղարաբաղի շրջանակի ձեւ տալն է: Հինգերորդ՝ հարկ է առաւելագոյն չափով օգտագործել Լեռնային Ղարաբաղի հաղորդակցութեան հնարաւորութիւնն, ինչ որ պիտի բարելաւէ սահմաններու միացնող արժէքը:

Սկսիմ վերջին գործօնէն: Յիշեցնենք, թէ որքան շատ հաղորդակցական ելքեր ունենան դարաբաղցիները, այնքան աւելի մեծ հնարաւորութիւն կը ստեղծուի աւելի նուազ կախեալ ըլլալու շրջափակումներէն: Հետեւաբար, անհրաժեշտ է ունենալ նաեւ տարածային շփումներու աւելի լայն հնարաւորութիւններ հարեւաններու հետ: Այստեղ պարզ կը դառնայ, թէ ինչու Լեռնային Ղարաբաղը չի կրնար սահմաններ ունենալ միայն Ատրպէյնանի հետ: Պարտադիր է սահման ուղանցքի մասին չէ: Վերջինս իր դասական իմաստով իրական նկատի ունինք առնուազն ամբողջ Լաչինի շրջանը: Հայաստանի հետ սահմանը պէտք է ընդգրկէ նաեւ Քելբաջարը, որպէս Մարտակերտի եւ երկու հայկական պետական միաւորներու ապահովութեան երաշխիք: Առանց Քելբաջարի՝ շատ աւելի պիտի շեշտուի արցախցիներու կախումները Ատրպէյնանի քահանայութեան:

Լեռնային Ղարաբաղի հարաւային սահմանի ամենալաւ տարբերակը Արաբսէն է, որ դէպի Իրան ելք մը պիտի ապահովէ: Սակայն վերջին դէպքերը, հայկական հրասայլերու Արաբսէն հասնելու սպառնալիքը, «ցնցեցին» Թուրքիան եւ Իրանը, որոնք սկսան սպառնալ հակամարտութեան միջազգայնացրաւային սահմանագիծը կարելի չէ համարել լաւագոյնը: Անիկա փոխգիշտողական պէտք է ըլլայ եւ պէտք է անցնի հարթավայրի ու լեռներու շփման գօտիով: Նոյն սկզբունքը պէտք է կիրարկուի նաեւ արեւմուտքի եւ հիւսիսի մէջ, ինչ որ հնարաւորութիւն պիտի տայ բնի շատ ապահովել երբեք կախիմ կապը Լեռնային Ղարաբաղի զանազան մասերու միջեւ:

Ինչպէս կը տեսնենք, Լեռնային Ղարաբաղի վերանշեալ սահմաններու տարբերակը փոխգիշտողական է, որուն մէջ այս տարբերակը կը վրդովեցնէ դարաբաղցիները: Եւ այս իրողութեան հետ Ատրպէյնան չի կրնար հաշուի չնստիլ: